

## ՀԵՏՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

### ՎՐԱՍՏԱՆԸ ԲԱՑՈՒՄ Է ՍԱՀՄԱՆԸ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ ՎՐԱՍՏԱՆԸ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅ ՃԱՆԱԳՎԱԾ 15 ԱՆՎՏԱՆԳ ԵՐԿՐՆԵՐԻ ՅՈՒՅՎԱԿՈՒՄ

Հունիսի 8-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան, միջգերատեսչական համակարգող խորհրդի հետ անցկացրած աշխատանքային խորհրդակցությունից հետո հայտարարեց, որ Վրաստանն իր սահմանները բացում է Եվրամիության մի քանի երկրների հետ: Նրա խոսքով, սահմանը բացվում է Գերմանիայի, Ֆրանսիայի, Լատվիայի, Լիտվայի եւ Էստոնիայի քաղաքացիների համար:



Նրա խոսքով, Եվրամիության կողմից Վրաստանը 15 անվտանգ երկրների ցուցակում ներառելուց եւ նրանց համար սահմանների հնարավոր բացման մասին հանձնարարական ներկայացնելուց հետո, Վրաստանի կառավարությունը սահմանները բացելու վերաբերյալ բանակցություններ է վարել մի շարք երկրների հետ: Մի քանի երկրի հետ արդեն հա-

մաձայնեցվել է, որ միմյանց քաղաքացիների համար սահմանները կբացվեն: Հանդիպմանը քննարկվեց աշխարհում եւ եվրոպական ցամաքի համավարակաբանական իրավիճակը՝ հաշվի առնելով, որ Եվրամիության մի

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ԱՌՋԵՎՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ

### ԳԻՈՐԳԻ ԳԱՆԱՐԻԱ. «ԿԱՐԵՎՈՐ ԶԷ, ԹԵ ՈՎ ԿԼԻՆԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԱՌԱՋԻՆԸ, ԿԱՐԵՎՈՐ Է ԱՆՑԿԱՑՆԵՆՔ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ»

Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան, անդրադառնալով առաջիկա ընտրությունների թեմային, խոսելով «Կացական երազանքի» կուսակցական ցուցակի մասին, հայտարարեց, որ կարելի է, թե ով կլինի ցուցակում առաջինը, այլ կարելի է բոլորս՝ ընդդիմությունը, կառավարությունը, քաղաքացիական հասարակությունը, անցկացնենք օրինակելի ընտրություններ:



Կառավարության ղեկավարի խոսքով, գլխավոր խնդիրն է, նվազագույն վնաս կրի յուրաքանչյուր ընտանիք, յուրաքանչյուր քաղաքացի եւ համավարակի ու տնտեսական ճգնաժամի պայմաններում հանգիստ, խաղաղ եւ ժողովրդավար կերպով անցկացվեն ընտրությունները: - Բազմիցս ասացի եւ կրկնեմ՝ ես կլինեմ վերջին համարը, ինձ համար որեւէ նշանակություն չունի, թե որ համարը կլինեմ, անկեղծ եմ ասում, իմ հիմնական խնդիրն է այսօր հա-

մավարակը, այն, որ առավելագույնս վերահսկենք յուրաքանչյուր քաղաքացու առողջության ռիսկերը: Երկրորդ խնդիրն է մեր տնտեսական վերածնունդը, էկոնոմիկայի վերականգնումը հետհամավարակի ժամանակաշրջանում: Գլխավոր խնդիրն է, նվազագույն վնաս կրի յուրաքանչյուր ընտանիք, յուրաքանչյուր քաղաքացի եւ համավարակի ու տնտեսական ճգնաժամի պայմաններում հան-

գիստ, խաղաղ եւ ժողովրդավար կերպով անցկացվեն ընտրությունները,- հայտարարել է Գիորգի Գախարիան: Վարչապետի խոսքով, կառավարությունը պայքարում է մի քանի ուղղություններով եւ հիմա ժամանակը չէ խոսել, թե ով կլինի ցուցակում առաջինը կամ երկրորդը:

## ՈՎ ԵՎ ԻՆՉՊԵՍ Է ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԱՌԱՋԻԿԱ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Ինչպես արդեն հաղորդել ենք, հունիսի 29-ին Վրաստանի խորհրդարանը՝ 117 կողմ եւ երեք դեմ ձայներով, երրորդ ընթերցմամբ, ընդունեց սահմանադրական փոփոխությունների փաթեթը, որը ներառում է ընտրական օրենսգրքի փոփոխություն: Մասնավորապես, փոփոխության համաձայն, ճիշտ է խառն ընտրակարգը պահպանվում է, թեպետ 2020 թվականի ընտրություններին կլինի 30 ընտրատարածք, 50-ի փոխարեն: Հետեւաբար, պայքար կտարվի մեծամասնական 30 մանդատի համար, իսկ համամասնական ընտրակարգով կբաշխվի համամասնական 120 պատգամավորի մանդատը: Մինչեւ մեկ տոկոսը նվազեցվել է ընտրաշեմը, թեեւ ներդրվում է փականքի մեխանիզմը, ըստ որի, կուսակցությունը, որը համամասնական ընտրակարգով չի ապահովում ձայների 40,54 տոկոսի աջակցությունը, զրկվում է միակուսակցական կառավարություն ձեւավորելու իրավունքից:

### «ԵՐԱՋԱՆՔԸ» ԱԿՏԻՎ ԱՇԽԱՏՈՒՄ Է ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԵՎ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԻ ՎՐԱ

Ինչպես հայտարարեց «Վրացական երազանքի» գործադիր քարտուղար Իրակլի Կոբախիձեն,

ներկա դրությամբ, ակտիվ աշխատանք է տարվում նախընտրական ծրագրի մշակման ուղղությամբ, ինչ վերաբերում է «Երազանքի» 30 մեծամասնական պատգամավորների թեկնածուներին, ապա

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

## ՀԱՅԱՍՏԱՆ

### ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԱՆՀՐԱՄԵՆՑ Է ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ»

Հունիսի 5-ին Հայաստանը նշեց Սահմանադրության օրը:

Օրվա առիթով Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը ուղերձով շնորհավորեց բնակչությանը՝ նշելով, որ հատկապես վերջին շրջանի մի շարք իրադարձությունների վերլուծությունը հանգեցրել է այն մտքին, որ Հայաստանի քաղաքացիները երկրի պետական կարգը հաճախ իրենցը չեն համարում, չեն տեսնում այդ կարգի օրգանական կապն իրենց կամքի հետ:



- Նշված հանգամանքների գիտակցումն ինձ բերել է այն եզրակացության, որ մեր երկրին հարկավոր է նոր սահմանադրություն, որը հենված քաղաքացիների կամքին, քաղաքացիներ-

ի կամքից բխող պետական կարգ կհաստատի Հայաստանում,- ընդգծեց Հայաստանի վարչապետը:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

## ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

### ՎՐԱՑԱԿԱՆ ԿՈՂՄԸ ԿՐԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆ

Ինչպես հայտարարեց Վրաստանի առողջապահության նախարար Եկատերինե Տիկարաձեն, Վրաստանը պատրաստ է համապատասխան աջակցություն ցուցաբերել հարեւան Հայաստանին, դա կախված է հայկական կողմից եւ այն կարիքներից, որոնք հայերը կունենան ու կնշեն:



Նշենք, որ Հայաստանին աջակցելու պատրաստակամության մասին Վրաստանի իշխանություններն առաջին անգամ չէ, որ խոսում են: Օգնության պատրաստակամության հայտարարություններով հանդես են եկել Վրաստանի արտաքին գործերի նախարարությունը, հիվանդությունների վերահսկման եւ հասարակական առողջապահության ազգային կենտրոնը: Մաս-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԳՈՐԾՈՒՄ Է

### ԵՐԿԱՐԱԶԳՎԵԼ Է ԻՆՔՆԱԶԲԱՂ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԳՐԱՆՅՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

Հունիսի 10-ին, երկրի կառավարության նիստում, վարչապետ Գիորգի Գախարիան հայտարարեց, որ համավարակի պատճառով առանց եկամտի մնացած քաղաքացիներին օգնություն տրամադրելու գրանցման ժամկետը երկարացվել է, եւ դա վերաբերում է ինքնազբաղ քաղաքացիներին հասցեագրված օգնությանը:

Նրա խոսքով, նրանց համար, ովքեր ուշացել են կամ չեն կարողացել հավաքել անհրաժեշտ փաստաթղթերը, վերջնաժամկետը երկարաձգվում է մինչեւ օգոստոսի 1-ը:

բերենք արտերկրում սեզոնային աշխատանքներում ներգրավված մարդկանց: Մենք կսկսենք նրանցից նմանատիպ գրանցման հայտադիմումներ ստանալ, եւ մարդիկ, ովքեր աշխատել են սեզոնային աշխատանքով, նույնպես պետության կողմից կստանան այդ սոցիալական օգնությունը,- հայտարարեց Գիորգի Գախարիան:

Միաժամանակ, ինչպես հայտնել է վարչապետը, կշարունակվեն ընդունվել դիմումները այն մարդկանցից, ովքեր սեզոնային աշխատանք են կատարել արտերկրում: - Միաժամանակ, մենք ընդլայնում ենք օգնությունը ինքնազբաղների մի մասի համար, եւ այսօր օգնություն կցուցա-

Ավելի վաղ, ինքնազբաղ քաղաքացիների գրանցման վերջնաժամկետը հունիսի 1-ն էր: (Խորագրի շարունակությունը՝ 3-րդ էջում)

ԵՎՐԱՍԻՆՏԵՐՈՒՄ

ԸՆԴԳԾՎԵՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿՈՆԿՐԵՏ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հունիսի 9-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան եւ Եվրահանձնաժողովի հարելանուխյան քաղաքականության եւ ընդլայնման հարցերով գլխավոր տնօրեն Կրիստիան Դանիելսոնն անցկացրին տեսակցական հանդիպում, որի ընթացքում քննարկեցին Վրաստանի եւ Եվրամիության համագործակցության առաջընթացը:



Կողմերն անդրադարձան տարբեր ոլորտներում ձեռք բերված դրական արդյունքներին եւ այն գործնական քայլերին, որոնք անհրաժեշտ էին համագործակցությունը էլ ավելի արդյունավետ դարձնելու համար: Նշվեց, որ անհրաժեշտ է սահմանել կոնկրետ առաջադրանքներ, որպեսզի Եվրամիությանն ինտեգրվելու գործընթացը լինի ավելի հաջող, ներառական եւ շոշափելի յուրաքանչյուր քաղաքացու համար:

Անդրադարձ է եղել նաեւ Եվրամիության օրակարգում առաջնահերթ հարցին՝ «Կա՞նաչ համաձայնագրին», եւ նշվել, որ Վրաստանն այս առումով ունի մեծ ներուժ եւ այդ տեսանկյունից հուսալի գործընկեր է: Հանդիպմանը Եվրամիության կողմից մասնակցել է Վրաստանում Եվրամիության դեսպան Կառլ Հարցելը, իսկ վրացական կողմից՝ Վրաստանի վարչապետի միջազգային հարաբերությունների հարցերով խորհրդակցական Իրակլի Զիքովանին:


ՐԵՏԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՎՐԱՍԱՆԸ ԲԱՅՈՒՄ Է ՍԱՀՄԱՆԸ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Հարթ երկրներ, այս փուլում, ընդհանրապես չեն բացել սահմանները օտարերկրյա պետությունների քաղաքացիների համար, այդ թվում՝ Եվրամիության անդամ պետությունների համար: Վրաստանի կառավարությունն ուշադիր հետևում է իրավիճակին եւ ձեռնարկում զգույշ քայլեր՝ դրանով ապահովելով իր քաղաքացիների առողջությունը: Միաժամանակ, Վրաստանի կառավարությունը շարունակում է ակտիվ համագործակցությունը Եվրամիության անդամ երկրների հետ: Վրաստանի կառավարության կողմից տարածած հաղորդագրության համա-

ծայն, թույլատրվում է Գերմանիայի, Ֆրանսիայի, Լատվիայի, Լիտվայի, Եստոնիայի քաղաքացիություն կամ կեցության իրավունք ունեցող անձանց մուտքը երկիր: Նրանք կարող են Վրաստան հասնել ուղիղ ավիաչվերթերով: Վրաստանի կառավարությունը թույլատրել է նաեւ Եվրոպական 13 երկրների քաղաքացիների ու ռեզիդենտների մուտքը, սակայն նրանց համար 14-օրյա կարանտինը պարտադիր կլինի: Վրաստան ժամանելուց առաջ, Եվրոպացիները պետք է հատուկ ձեւաթուղթ լրացնեն, որտեղ նշելու են վերջին 2 շաբաթվա իրենց ուղևորությունների մասին եւ կոնտակտային տվյալները: Արդեն բանակցություններ են տարվում Եվրոպական ավիափոխադրողների հետ ավիահաղորդակցությունը վերականգնելու ուղղությամբ: Պարտադիր կարանտինն ուժի մեջ է մտնում նաեւ հայրենիք վերադարձող Վրաստանի քաղաքացիների համար: Հստակեցված է նաեւ գործնական այցելությունների կարգը: Գործարարը ցանկացած երկրից կարող է Վրաստան գալ՝ վճարելով 2 շաբաթվա կարանտինի կամ երկու շաբաթվա ընթացքում 72 ժամը մեկ PCR թեստի արժեքը: Ինչ վերաբերում է Վրաստանի քաղաքացիների ուղևորություններին, ապա արդեն 18 երկիր հայտարարել է Վրաստանի քաղաքացիների համար սահմանների բացման մասին:



ԱՄՆ ԱՌՋԱՆՆԵՐԻ ԴԵՄ ԿՈՎԻ ԶԵՐԹԱՎԱՆ ԶՈՐԸ ՔՐԻՍՏՈՓՈՐ ԿՈՒՆԿՍՏՈՆ Է

Միացյալ Նահանգների Մերիլենդի նահանգի Բալթիմոր քաղաքում անցկացված բողոքի ցույցի մասնակիցները հանեցին եւ նավահանգստում ջուրը զցեցին Քրիստոփոր Կոլումբոսի հուշարձանը: Բողոքի ցույցին մասնակցեց գրեթե 300 մարդ: Նշենք, որ Բալթիմորում հուշարձանը կանգնեցվել էր շուրջ 30 տարի առաջ:

Վերջին մի քանի շաբաթների ընթացքում, աշխարհի շատ երկրներում սկսել են կործանել այն մարդկանց հուշարձանները, ունի հակառակադասական ցույցերի կողմնակիցները համարում են ռասիստներ: Այսպես, հունիսի 11-ին ԱՄՆ-ի Մասաչուսեթս նահանգի Բոստոն քաղաքում Ջորջ Ֆլոյդի սպանության պատճառով անցկացվող բողոքի ցույցերի մասնակիցները կտրել էին Քրիստոփոր Կոլումբոսի հուշարձանի գլուխը: Հունիսի 10-ին Վիջինիայի նահանգի Ռիչմոնդ քաղաքում ցույցի մասնակիցները զցեցին Քրիստոփոր Կոլումբոսի հուշարձանը, այն փաթաթեցին ԱՄՆ դրոշով եւ այրեցին, որից հետո հուշարձանը զցեցին լիճը: Բելգիայի Անտվերպեն քաղաքում ռասիզմի դեմ պայքարի շրջանակներում քանդեցին Լիոպոլդ երկրորդ թագավորի հուշարձանը:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ԿԱՎԵՐԱՑՎԵԼ Է ՏՆՏԵՍԱՎԱՆ ՆՇԱՆԱՎԱԼԻ ԱՆԿՈՒՄ

Եվրամիության տարածքում սկսվել է համավարակի երկրորդ ալիքը: Կորոնավիրուսի առաջին ալիքի տարածումը կանխելու նպատակով Եվրամիության երկրներում ներդրվեցին տարբեր տեսակի սահմանափակումներ: Եվրահանձնաժողովի գնահատմամբ, 2020 թվականին եվրոյի գոտու պետությունների միագումար համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) անկումը կհասնի 8,7 տոկոսի: Իր գարնանային կանխատեսման մեջ Եվրահանձնաժողովն այս տարի անկումը կանխատեսել էր համախառն ներքին արդյունքի 7,7 տոկոսի մակարդակում:

ՌՈՒՍԱՍՏԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՎԵՑԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, հունիսի 1-ին Ռուսաստանում անցկացվեց սահմանադրական փոփոխությունների հարցով հանրաքվե, որի մասնակիցների 77,92 տոկոսը աջակցեց երկրի կառավարության կողմից ներկայացված փոփոխություններին: Հունիսի 4-ին Վլադիմիր Պուտինի կողմից փաստաթղթի ստորագրումից հետո, այդ փոփոխությունները մտան ուժի մեջ: Նշենք, որ վերոնշյալ փոփոխությունները Վլադիմիր Պուտինին հնարավորություն են տալիս մասնակցել առաջիկա երկու նախագահական ընտրություններին: Բացի այդ, սահմանադրական փոփոխությունները նկատի ունեն իշխանության յուրօրինակ միջոցներով կարգով բաշխում, որը կավելացնի նախագահի իրավունքները:

ՍԵՐԲԻԱ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ ԵՆ ՀԱՎԱՀԱՄԱՆՃԱՐԱԿԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Սերբիայում վերջին երկու օրերի ընթացքում տեղի են ունենում հակակառավարական ցույցեր: Ցուցարարները բողոքում են կառավարության հակահամաճարակային միջոցառումներից: Երկօրյա անկարգությունների հետեւանքով տուժել է 118 ոստիկան, ձերբակալվել է 153 քաղաքացի: Բողոքի ցույցեր են անցկացվել Բելգրադում, Նովի Սադում, Նիշում, Կրագուվեացում:

COVID - 19. ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄ. ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՐՀՈՒՄ, ՎՐԱՍԱՆՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՂԲԵՅԱՆՈՒՄ

Աշխարհում նոր տիպի կորոնավիրուսային վարակի՝ COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն անցել է 12,433 միլիոնը: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 558 հազարը: Ապաքինվել է ավելի քան 7 միլիոն 252 հազարից ավելի մարդ:

ցածներից՝ 69 316-ի: Վարակվածների թվով հաջորդ տեղում Հնդկաստանն է, որտեղ վարակվել է 798 161 մարդ, մահացել է 21 656-ը: Ռուսաստանում կորոնավիրուսով վարակվել է 713 936 մարդ, վարակի հետեւանքով մահացել է 11 017 մարդ: Հայաստանում ընդհանուր առմամբ վարակվածների թիվը

հասնում է 30 903-ի, որից մահացել է 546-ը, ապաքինվել է 18 709-ը: Արդեն վարակվածների թիվը կազմում է 22 990 մարդ: Վարակից մահացել է 292, ապաքինվել՝ 14 093 մարդ: Հունիսի 10-ի տվյալներով, Վրաստանում վարակվել է 973 մարդ, մահացել է 15-ը, ապաքինվել է 846-ը:

Վիրուսով վարակվածների թվով առաջին տեղում գտնվող ԱՄՆ-ում 3 223 797 հաստատված դեպք կա: Այստեղ մահացածների թիվը 135 870 է: Այս ցուցանիշով ԱՄՆ-ն առաջինն է աշխարհում: Երկրորդ տեղում Բրազիլիան է, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է 1 762 263-ի, մահա-

թյան խնդրանք չի եղել: Ավելացնենք, որ Հայաստանին աջակցելու առաջարկով «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում ստորագրահավաք էր սկսվել: Վիրահայերի կողմից մի քանի տասնյակ շնչառական սարք էր գնվել եւ ուղարկվել Հայաստան, նաեւ դրամահավաք էր արվել ու հանգանակված գումարով մի քանի հազար դիմակ էր ձեռք բերվել ու արդեն բաժանվել Հայաստանի մարզերում եւ Երեւանում: Հիշեցնենք, որ հունիսի սկզբին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարել էր, որ հոսպիտալացման կարիք ունեցողներ կան, բայց կլիզիկաներում տեղ չկա:

ՎՐԱՍԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՎՐԱՑԱԿԱՆ ԿՈՂՄԸ ԿՐԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նավորապես, վրացական կողմը առաջարկել էր Հայաստանի քաղաքացիների նմուշառումները հետազոտել Լուզարի լաբորատորիայում, PCR թեստեր նվիրելու պատրաստակամություն էին նաեւ հայտնել: Հայաստանի կողմից աջակցու-

թյան խնդրանք չի եղել: Ավելացնենք, որ Հայաստանին աջակցելու առաջարկով «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում ստորագրահավաք էր սկսվել: Վիրահայերի կողմից մի քանի տասնյակ շնչառական սարք էր գնվել եւ ուղարկվել Հայաստան, նաեւ դրամահավաք էր արվել ու հանգանակված գումարով մի քանի հազար դիմակ էր ձեռք բերվել ու արդեն բաժանվել Հայաստանի մարզերում եւ Երեւանում: Հիշեցնենք, որ հունիսի սկզբին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարել էր, որ հոսպիտալացման կարիք ունեցողներ կան, բայց կլիզիկաներում տեղ չկա:

ՍԱՄՑՆԵ-ՋԱՎԱԽԵԹԻ

ԿԱՐԿՈՒՏ՝ ԱԽԱԼՑԻՒՄԵՆԻ ԵՎ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՍ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏՆԵՐՈՒՄ. ԾՇՏՎՈՒՄ Է ՎՆԱՍԻ ՉԱՓԸ

Հունիսի 4-5-ը Ախալցխիսի եւ Ախալքալաքի մունիցիպալիտետների մի շարք գյուղերում հորդառատ անձրևը վերածվեց կարկուտի, որի արդյունքում, նշանակալի վնաս հասցվեց տեղի գյուղատնտեսական հողերին:



Այսպես, Ախալցխիսի մունիցիպալիտետի Ծնիսի գյուղում կարկուտը մի քանի րոպեում ոչնչացրեց մշակաբույսերի ցանքադաշտերը, խափանեց եթեկեկությունը Ախալցխիս-Բորժոմի կենտրոնական մայրուղիով: Տարերային աղետը լուրջ վնաս հասցրեց նաեւ Ախալքալաքի մունիցիպալիտետի Օրջա եւ Խանդո գյուղերին: Օրջայում կարկուտը ոչնչացրել է դաշտերի բերքի շուրջ 90 տոկոսը: Ընդհանուր առմամբ, կարկուտի հարվածի տակ են հայտնվել գյուղի 830 հեկտար ցանքադաշտերից 780-ը: Կարտոֆիլի բերքը գրեթե ամբողջությամբ ոչնչացվել է, իսկ հատիկայիններից առավելապես տուժել են գարու դաշտերը: Ցորենի դաշտերը մի փոքր ավելի քիչ վնաս են կրել հենց այն

պատճառով, որ դրանք ցանվել են փոքր տարածքում: Կարկուտը ոչնչացրել է նաեւ 2 հա հողատարածքի շաղգամի բերքը: Ինչ վերաբերում է Խանդո գյուղին, ապա տեղացիների խոսքով կարկուտը լուրջ վնաս է հասցրել կարտոֆիլի ցանքադաշտերին: Ներկայումս տեղական իշխանությունները փորձում են հստակեցնել տարերային աղետի վնասի չափերը եւ բնակչությանը օգնություն ցուցաբերելու հնարավորությունները:

ՎՐԱՍԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՎՐԱՑԱԿԱՆ ԿՈՂՄԸ ԿՐԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆ

## Շարքից շարք. Փաստեր եւ իրադարձություններ

### ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

#### ԿՐԹԱԿԱՆ

## ԸՆԹԱՆՈՒՄ ԵՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Հուլիսի 6-ին մեկնարկեցին միասնական ազգային քննությունները: Այդ օրը Վրաստանի ողջ տարածքում բացված 24 քննչական կենտրոնում դիմորդները հանձնեցին «Վրաց լեզու եւ գրականություն» առարկայի քննությունը:**

Հիվանդությունների վերահսկման եւ հանրային առողջության ազգային կենտրոնի, ինչպես նաեւ Եվրոպայի հիվանդությունների կանխարգելման եւ վերահսկման կենտրոնի (ECDC) հանձնարարականների համաձայն, կորոնավիրուսի տարածումը կանխարգելելու պատճառով, երկրում բացված 24 քննչական կենտրոններում գործում են հատուկ կանոններ: Մասնավորապես, գրանցման ժամանակ պահպանված էր սոցիալական հեռավորությունը, ինչպես նաեւ մինչ քննչական կենտրոն մտնելը, դիմորդները ջերմաստիճանը: Դիմորդների գրավոր քննական աշխատանքները կստուգվեն Միասնական ազգային քննությունների ավարտից 3-4 օր անց, մինչ այդ, կորոնավիրուսի տարածումը կանխելու նպատակով աշխատանքները կարանտինացված կլինեն:


Միասնական ազգային քննությունների մեկնարկի առիթով, դիմորդներին շնորհավորեցին Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին, վարչապետ Գիորգի Գախարիան:

«Այսօր սկսվել են միասնական ազգային քննությունները: Հաջողություն են մաղթում ձեզ: Սա ձեր կյանքի ամենակարևոր

որ փուլերից մեկն է, երբ որոշում եք ձեր ապագան: Վստահ եմ, որ դուք հաջողությամբ կհաղթահարեք այս մարտահրավերը եւ ձեռք բերած գիտելիքները կօգտագործեք առավելագույնս: Դուք եք մեր ապագան եւ ձեր կրթությունը Վրաստանի առաջընթացի երաշխիքն է», - իր ֆեյսբուքյան պաշտոնական էջում գրառել է վարչապետ Գիորգի Գախարիան:

Միասնական ազգային քննությունների առաջին օրը, Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Միխեիլ Զիխենկելին այցելեց Թբիլիսիի քննչական կենտրոններ եւ հաջողություն մաղթեց դիմորդներին:

Հիշեցնենք՝ հուլիսի 6-ին մեկնարկած Միասնական ազգային քննությունների կավարտվելու հուլիսի 25-ին: Այս տարվա ընդունելության քննություններին գրանցվել է 39 300 դիմորդ:



## «ԱՐՏԱԴՐԻՐ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ» ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԾԱՆԱԶԿԵԼ Է ԼԱՎԱԳՈՒՅՆԸ

Վրաստանի կառավարության «Արտադրի'ր Վրաստանում» գործակալությունը «WTPO Awards 2020»-ի շրջանակներում ճանաչվել է լավագույն օրինակներից մեկը արտահանման, խթանման եւ աջակցման աշխարհում: Մրցություն Վրաստանը եզրափակելի 6 մասնակիցների թվում է: Եզրափակիչ փուլում են կազմակերպություններ, որոնք խրախուսում են արտահանման զարգացման նորարարական եւ արդյունավետ նախաձեռնությունները:

Մրցութային անցկացվում է «International Trade Center» կողմից, որը Միացյալ ազգերի եւ Համաշխարհային առևտրի կազմակերպության համատեղ գործակալությունն է: Հաղթողները կհայտարարվեն հուլիսի 14-ին, Փանայում, «WTPO»-ի 13-րդ կոնֆերանսին:

## ԴՅՈՒՐԱՑՎԵԼ Է ԱԳՐՈՔԱՐՏԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Վրաստանի կառավարության հայտարարությամբ, գյուղատնտեսական հողերի համասեփականատերերի համար ագրոքարտերի եւ վառելիքի գեղջի քարտերի ստացման ընթացակարգը դիմարկվել է: Ագրոքարտեր ստանալու համար բավական է, որ համասեփականատերերից մեկը ներկայացնի մնացած համասեփականատերերից ստացած գրավոր համաձայնությունը: Համաձայնության բովանդակության եւ ստորագրության իսկության համար պատասխանատու կլինի փաստաթուղթը ներկայացնող համասեփականատերը:

Քարտերը հնարավոր է ձեռք բերել նաեւ նոտարական համաձայնության կամ բուրձի համասեփականատերերի ներկայության դեպքում: Ագրոքարտ ստանալու համար, ֆերմերները մինչեւ բանկ գնալը ծրագրին մասնակցելու եւ փոխանցված բալերի մասին տեղեկություն կարող են ստանալ myliberty.ge կայքից: Բանկ այցելելու ժամանակ պետք է ունենալ անձը հաստատող փաստաթուղթ:

#### ՆԱԽԱԶԵՆՈՒԹՅՈՒՆ

## ԿՅԱՆՔԻ ԿՈՉՎԵՅ «ՃԱՍՓՈՐԴԻՐ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳԻՐԸ

Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի հայտարարությամբ, սկսվում է «Ճամփորդի Վրաստանի համար» նոր ծրագրի:

Ինչպես նշեց Գիորգի Գախարիան, բուրձի հնարավորություն ունեն կրկին հայտնաբերելու Վրաստանը:

- Ցանկանում եմ ձեզանց յուրաքանչյուրին խնդրել, որ առավելագույնս ակտիվ ներգրավվեք այս ծրագրին: Բուրձի պետք է գիտակցենք, որ այժմ համավարակի օգնությամբ հնարավորություն

ունենք նորից հայտնաբերել մեր երկիրը եւ պատրաստվել միջազգային տուրիզմի ամբողջական բացմանը, լինենք լավագույն էքսկուրսավարներ հյուրերի եւ միջազգային այցելուների համար: Ակտիվ օգտվենք այս իրավիճակից, աջակցենք, տվյալ ոլորտին՝ զբոսաշրջությանը, որն ամենաշատն է տուժել: Սա մեծագույն

հնարավորություն է, ձեզանց յուրաքանչյուրը, մեր ընտանիքի անդամների հետ միասին, մեկ անգամ եւս հայտնաբերենք Վրաստանը, այն վայրերը, որոնց մասին լսել ենք, ընթերցել, սակայն երբեք չենք տեսել: Ամեն բան պետք է անենք, որպեսզի այն շրջանների համար, որոնք տուրիստական առումով կարելի էին, թեթևացնենք ճգնաժամով պայմանավորված խնդիրները»,- հայտարարեց Գիորգի Գախարիան:

#### ԱՂԱՎՈՐՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԶԱՐԶԱԿՈՒՄ

## ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԿՐԿԻՆ ԱՆԴՐԱԴԱՐՁԱՎ ԼՈՒՊԱՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ԹԵՄԱՅԻՆ

Օրերս Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունը հանդես եկավ հայտարարությամբ, ըստ որի, աշխարհի տարբեր երկրներում, այդ թվում՝ Ռուսաստանի սահմանների մոտակայքում, Միացյալ Նահանգների պաշտպանության նախարարության ռազմական օդանավակայանում հետ կապված լուրջ հարցեր են ծագում:

Ի պատասխան այդ հայտարարության, Վրաստանի արտաքին գործերի նախարարությունը հանդես եկավ հատուկ ուղերձով, որտեղ մասնավորապես նշվում է, որ Ռուսաստանի ԱԳՆ-ն ձեռնամուխ է եղել հերթական ասպակողմնորոշիչ հարձակման, Ռիչարդ Լուգարի անվան հասարակական առողջապահության ուսումնասիրության կենտրոնի դեմ, որն իրենից ներկայացնում է Վրաստան-ԱՄՆ ռազմավարական համագործակցության օրինակը: Հատկանշական է, որ առաջին ասպակողմնորոշիչ արշավն սկսվեց մայիսի 26-ին՝ երկրի ԱՆԿԿԿ-ի

թյան օրը: Այն ժամանակ, Վրաստանի ԱԳՆ-ն հանդես եկավ ընդգրկում, փաստավորված պատասխանով, որտեղ նշված էր, որ Լուգարի կենտրոնի հետ համագործակցության շնորհիվ, Վրաստանի բժիշկները, համաճարակաբաններին, իշխանությունը եւ ողջ հասարակությունը համատեղ ջանքերով կորոնավիրուսի համավարակի դեմ պայքարի տեսանկյունից հասել են զգալի հաջողությունների, որի արդյունքում մի քանի օր առաջ Եվրամիության կողմից Վրաստանը ներառվել է անվտանգ երկրների ցուցակում:

#### ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԳՈՐԾՈՒՄ Է

## ԸՆԹԱՑՔԻ ՄԵՋ Է ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՏՈՒԺԱԾՆԵՐԻՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Վրաստանում շարունակվում է կորոնավիրուսի համավարակով պայմանավորված սահմանափակումների արդյունքում տուժածներին փոխհատուցման հանձնման կառավարական ծրագրի իրականացումը:

Հուլիսի 7-ի դրությամբ, պետությունից փոխհատուցում արդեն ստացել է 244 956 մարդ:

Վրաստանի առողջապահության նախարարության կայքում գրանցվել են 188 363 ինքնագրադ անձինք՝ ցանկանալով ստանալ փոխհատուցում: Դրանցից 115 719-ը ստացել է 300 լարի փոխհատուցում: Ընդհանուր առմամբ, փոխանցվել է 34 715 700 լարի:

Ինչ վերաբերում է համավարակի հետեւանքով տուժած աշխատողներին, ապա 129 237 մարդ ստացել է օգնություն 200 լարիի չափով: Այս քաղաքացիների փոխանցված գումարը 25 847 400 լարի է կազմում:

Մինչ օրս գրանցվել է 12 482 մարդ, ովքեր ինքնագրադ են առևտրի ոլորտում. 9 730-ը՝ շուկաների առևտրականներ են, իսկ 2 752-ը՝ աշխատում են առևտրի այլ ոլորտներում: 300 լարի չափով

միանվագ օգնություն է ստացել 6904 շուկայի եւ 1 727 այլ ոլորտի աշխատող:

Ինչ վերաբերում է վարորդներին, ապա գրանցվել է ընդամենը 15 904 մարդ, որոնց թվում 10 660-ը՝ արտոնագրված տաքսիստներն են: Դրանցից 13 192-ը փոխհատուցում են ստացել 300 լարիի չափով: 9 632 տաքսիստներ ստացել են 300-ական լարի:

Նշենք, որ գրանցվածների թվում են նաեւ դայակները, դասուսույցները, ռեստորանների, հյուրանոցների մատուցող անձնակազմը, հացթուխները, գեղեցկության սրահների անձնակազմը, տուրօպերատորները, էքսկուրսավարները, բանվորները եւ ուրիշներ: Հայտարարումների ընդունումն ու մշակումը շարունակվում են:

Հունիսի 29-ին սկսվել է արտերկրում արտագնա սեզոնային աշխատանքով զբաղված Վրաստանի քաղաքացիների գրանցման գործընթացը: Գրանցվել հնար

ավոր է compensation.moh.gov.ge կայքում: Նրանք կարող են նաեւ պետությունից օգնություն ստանալ 300 լարիի չափով: Գրանցման գործընթացը կավարտվի հուլիսի 15-ին:

Այս կատեգորիայի քաղաքացիներին ֆինանսական օգնություն ստանալու համար անհրաժեշտ չէ որեւէ փաստաթուղթ ներկայացնել: Գրանցվել կարող են այն մարդիկ, ովքեր 2019 թվականի ընթացքում մեկնել են սեզոնային աշխատանքի եւ մարտ-հոկտեմբեր 30-ից 120 օր գտնվել են արտերկրում:

Փոխհատուցումը հասանելի է մարդկանց եւս մեկ կատեգորիայի, նրանց, ում աշխատանքը կապված է կանոնավոր սահմանների հատման հետ: Եթե 2019-ի ընթացքում նրանք հատել են սահմանը ավելի քան 60 անգամ, ապա այդ մարդիկ նույնպես կարող են փոխհատուցում ստանալու հույս ունենալ: Անձնագրի կամ անձը հաստատող վկայականի պատճեններից բացի, այլ փաստաթղթեր ներկայացնելու անհրաժեշտություն չկա:

*ՄԻՍՆ ԿԻԼԱԶԵ*

## Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻ. «ԵԿԵՔ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԸ ՄՏԱՆԱԼՈՒ»

Ինչպես արդեն հաղորդել ենք, հուլիսի 1-ից 70-ն անց կենսաթոշակառուների թոշակն ավելացել է 30 լարիով եւ կազմել 250 լարի: Վրաստանի կառավարության տվյալներով, ավելացած կենսաթոշակ կստանա շուրջ 410 հազար կենսաթոշակառու:

Միաժամանակ, 70-ն անց բարձրալեռ բնակավայրերում ապրող կենսաթոշակառուների թոշակը կկազմի 300 լարի: Սույն որոշումն ընդունվել է բարձրալեռ տարածաշրջանների գարգացման մասին օրենքի համաձայն, ըստ որի, բարձրալեռ բնակավայրերում ապրող կենսաթոշակային տարիքի հասած անձանց ամսական որպես պետական կենսաթոշակի հավելվածար, տրվում է գումար կենսաթոշակի 20 տոկոսի չափով:

Կառավարությունը նաեւ տեղեկացնում է, որ 2021 թվականի հունվարից երկրում ծրագրվում է կենսաթոշակների նույնականացման կարգ, այսինքն՝ հաջորդ տարի բոլոր կենսաթոշակառուների թոշակը կավելանա առնվազն արժեզրկման մակարդակին համապատասխան:

COVID - 19.

ԳԱՍՂՐԵԼԻՉԵ, ԻՍՆԱՉԵ, ՑԵՐՑՎԱՉԵ՝ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՂ «ԵՐԵՔ ԶՐԱՑԱՆԱԿԻՐՆԵՐԸ», ՈՐՈՆՑՈՎ ԶԻԱՑԱԾ Է ԱՇԽԱՐՀԸ

Բրիտանական BBC-ին հրապարակել է հոդված Վրաստանի համաճարակաբանների մասին՝ «Ինչպե՞ս են «Երեք հրացանակիրներն» օգնել Վրաստանին վիրուսի դեմ պայքարում» վերնագրով:

Հողվածի հեղինակը նշում է, որ Վրաստանը գտնվում է այն 15 երկրների ցանկում, որոնք ԵՄ-ն համարում է բավականաչափ անվտանգ, որպեսզի իր սահմանները բացի նրանց համար: Վրաստանը նախկին խորհրդային միակ երկիրն է, որը ստացել է այդ կարգավիճակը:

3,7 միլիոն բնակչություն ունեցող երկրում գրանցվել է COVID-19 հազարից պակաս դեպք, մահացել է 15 մարդ:

Ինչպես ասվում է հոդվածում, մի խումբ գիտնականներ, որոնք անվանվում են «Երեք հրացանակիրներ», գովաբանվում են համավարակը հաջողությամբ կառավարելու համար:

Համեմատության համար նշենք, որ կորոնավիրուսը մոլեկուլում է հարեան Հայաստանում: Ամեն օր հաստատվում են COVID-19 հարյուրավոր նոր դեպքեր, իսկ ընդհանուր թիվը գերազանցում է 26000-ը, մահացել է մոտ 500 մարդ: Հարյուրավոր նոր դեպքեր ամեն օր հայտնաբերվում են նաև հարեան Ադրբեջանում:

«BBC»-ն գրում է, որ Վրաստանում նոր կորոնավիրուսի առաջին դեպքը գրանցվել է փետրվարի վերջին, որին անմիջապես արձագանքել է կառավարությունը: Մարտի կեսերին փակվել էին բոլոր դպրոցները, համալսարանները, ոչ հիմնական բիզնեսը, դադարեցվել էր հասարակական տրանսպորտի աշխատանքը: Արտակարգ դրություն հայտարարելուց հետո, մարտի 21-ին, քաղաքում մարդաշատ հավաքույթները և տեղաշարժն արգելվել էր: Գիշերային ժամերին պարետային ժամ էր սահմանվել:

Ինչպես նշվում է հոդվածում, Վրաստանում ամենակարևոր կորոնական տոնի՝ Ուղղափառ Ձատկի ժամանակ իշխանությունները արգելել էին մաս-



նավոր տրանսպորտային միջոցներով տեղաշարժը, ինչպես նաև փակ էր գերեզմանատների մուտքը:

- Մենք հաշվի ենք առել համավարակի վտանգն առաջին հաստատված դեպքից մեկ ամիս առաջ: Ըստ մեր երկրի առաջնահատկությունների՝ աշխարհագրական դիրքի և բնակչության փոքր թվի մենք չէինք կարողանա օգտագործել այլ երկրների օրինակները, - հայտարարել է Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան:

«BBC»-ն գրում է, որ տեղեկատվական արշավները և ինֆորմացիայի պարբերական տարածումը տեղի է ունեցել երկրի առաջատար գիտնականների կողմից՝ Հիվանդությունների վերահսկման և հանրային առողջապահության ազգային կենտրոնի (NCDC) կողմից: Ինչպես նշվում է հոդվածում, այս կենտրոնի Լուգարի լաբորատորիան Ռուսաստանի ապատեղեկատվության մշտական թիրախ է:

- Ռուսաստանն այն մեղադրում է ԱՄՆ-ի կենսաբանական զենքի գաղտնի ծրագրին մասնակցելու մեջ: Եվ սակայն փաստ է, որ այդ լաբորատորիայի գիտնականները ղեկավարում են երկրի պայքարը համավարակի դեմ, - գրում է հոդվածագիրը:

«BBC»-ն նշում է, որ Վրաստանի

Հիվանդությունների վերահսկման և հանրային առողջապահության ազգային կենտրոնի գիտնականները մեծ հարգանքի են արժանացել: Եռյակը լրացնում են Ամիրան Գամդելիձեն, Պաստա Իմնածեն և Թենգիզ Ցերցվածեն: Թբիլիսիի վարակիչ հիվանդությունների, ՁԻԱՀ-ի և կլինիկական իմունոլոգիայի կենտրոնի ղեկավարը: Մեկ այլ հեղինակություն վայելող անձ, Հանրային առողջապահական արշավի դեմքը՝ Մարիան Էզուզբախան է, ով Թբիլիսիի ինֆեկցիոն հիվանդանոցի տնօրենն է:

Ըստ «BBC»-ի, 19 լաբորատորիաներ աշխատում են Վրաստանում կորոնավիրուսի թեստերն անցկացնելու գծով: «Ըստ ոսկե ստանդարտի, մենք իրականացրել ենք մոտ 30 հազար «PCR» թեստ՝ մեկ միլիոն բնակչության հաշվով: Ապաքինիվածների գործակիցը 86% է, սակայն, ցավոք, մենք ունեցել ենք 15 մահվան ելք, ինչը 1,6% է կազմում: Համաշխարհային ցուցանիշի համեմատ, այն շատ ցածր է, - հայտնել է Ամիրան Գամդելիձեն:

«BBC»-ն հոդվածում գրում է, որ Վրաստանի կառավարությունը շնորհակալություն է հայտնել հասարակությանը նրանց ցուցումներին հետևելու համար:

ԱՆԵԿՊՏ՝ ԹԵՄԱՅՈՎ  
Գրանցվեց կորոնավիրուսի պատճառով մահվան առաջին դեպքը. եռօրյա համատեղ կարանտինից հետո, տղամարդը խեղդամահ արեց զոքանջին:

ԱՌՋԵՎՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ

ՈՎ ԵՎ ԻՆՉՊԵՍ Է ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԱՌԱՋԻԿԱ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նրանց անունները կհրապարակվեն մոտ օտրին:

- Մենք կներկայացնենք շատ մանրամասն նախընտրական ծրագիր, որը հավանաբար պատրաստ կլինի հուլիսի վերջին: Ծրագրի մեջ ընդգրկվում են պետական և հանրային գործազման բոլոր ուղղությունները, որոնք են ժողովրդավարությունը, մարդու իրավունքները, էկոնոմիկան, սոցիալական հարցերը, արտաքին քաղաքականությունը և այլն, - հայտարարեց Իրակլի Կոբախիձեն:

Նրա խոսքով, ինչպես Թբիլիսիում, այնպես էլ՝ ընտատարածքներում, իշխող կուսակցությունը նախատեսում է մինչև հուլիսի կեսը հայտարարել բոլոր 30 մեծամասնական պատգամավորության թեկնածուների անունները, ինչից հետո իշխող թիվը լրիվությամբ կանցնի նախընտրական պատրաստության:

Սակայն, կուսակցության գործադիր քարտուղարը հրաժարվեց մանրամասնել ինչպես մեծամասնական թեկնածուների, այնպես էլ՝ համամասնական ցուցակում թեկնածուների ընտրության չափորոշիչները՝ նշելով, որ յուրաքանչյուրի թեկնածությունը կքննակվի առանձին: Նա հրաժարվեց նաև մանրամասնել կուսակցական ցուցակի առաջին հնարավոր տասնյակի ով լինելը՝ հայտարարելով, որ ցուցակում կլինեն երկրում ճանաչված գործիչներ:

ՏԱՐԱԶԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՄԻԱՑՅԱԼ ԸՆԴՊԻՍՈՒԹՅԱՆ ԵՄՔԱՐՈՒՄ

Չնայած, որ գաղափարախոսությամբ, ներքին և արտաքին հարցերում քաղաքականության դիրքորոշմամբ, անգամ կուսակցական առաջնորդների անձնական անհամատեղության պայմաններում, խորհրդարանական և ոչ խորհրդարանական միացյալ ընդդիմությանը հաջողվեց մասնակիորեն համաձայնեցնել դիրքերը առան-



ջադրվող միասնական թեկնածուների հարցում, սակայն, ինչպես պարզվեց, դեռևս անցյալ տարվա աշնանը ձեւավորված «Ուժը միասնության մեջ է» միացյալ ընդդիմությունում տարածայնություններն ու դիրքերի անհամատեղելիությունը շատ ավելի խորն ու անհաղթահարելի են, քան կարելի էր պատկերացնել: Մասնավորապես, խոսքը վերաբերում է ընտրադաշինքների հարցին, քանի որ նմանների ձեւավորման դեպքում, դրանք հաղթահարելու են ոչ թե մեկ տոկոսի ընտրաշենք, այլ պետք է կարողանան այնքան տոկոսի հաղթահարումը, որքան կուսակցությունը կմիավորվի ընտրադաշինքում: Այս հանգամանքը փոքրիշատե ճանաչված կուսակցություններին («Ազգային շարժում», «Եվրոպական Վրաստան», «Հայրենասերների պլան», «Լեյբորիստական կուսակցություն», «Նիմո Բուրջանածե՝ ժողովրդավարական շարժում» և այլն) պարտադրում է փոխել մոտեցումն ու ընտրություններին մասնակցել առանց որեւէ Դաշնակցի, ում հետ, փաստորեն, ստիպված են լինելու իրենց ձայները «Նվիրել» Դաշինքի այն կուսակցություններին, որոնք ինքնուրույն չեն հաղթահարի նույնիսկ 1 տոկոսանոց շենք: Արդյունքում, արդեն խոսակցություններ են տարվում միացյալ ընդդիմության փլուզման, ընտրություններին առանձին մասնակցելու անհրաժեշտության մասին: Մասնավորապես, հարցը ակտիվ քննարկվում է «Ազգային շարժում», «Հայրենասերների պլան» և

ՍԱՀՄԱՆԱՓՈՎՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՔ ԴԵՌ ԳՈՐԾՈՒՄ ԵՆ

Վրաստանում շարունակվում է կորոնավիրուսի տարածման կանխարգելման նպատակով սահմանափակումների փուլերով վերացման գործընթացը:

Վրաստանի կառավարության միջգերատեսչական խորհրդի որոշմամբ, հուլիսի 6-ից թույլատրվում է թրեյնինգների և գիտաժողովների անցկացումը նաև փակ տարածքներում: Թույլատրվում է նաև բաց տարածքներում առկա ատրակցիոնների գործունեությունը, բաց տարածքներում մշակութային միջոցառումների անցկացումը:

Հուլիսի 8-ի կառավարության որոշմամբ, Վրաստանն իր սահմանները բացեց 5 երկրների համար, որտեղից էլ կընդունի առաջին զբոսաշրջիկներին: Ավելի վաղ, որոշում կայացվեց բացել լողավազաններն ու մարզադահլիճները:

Ըստ կառավարության, քննարկումներ են ընթանում նաև բաց տարածքներում մշակութային միջոցառումներ անցկացնելու վերաբերյալ հատուկ հանձնարարականներ մշակելու նպատակով:

Չնայած սահմանափակումների նվազմանը, դրանցից մի քանիսը դեռ ուժի մեջ են մնում Վրաստանում: Դեռևս գործող սահմանափակումներն են՝

- \* փակ տարածքներում, հանրային հաստատություններում, հանրային տրանսպորտում, գրասենյակներում և խանութներում դիմակի կրումն ու սոցիալական հեռավորություն պահպանումը,
- \* հանրային տրանսպորտում արգելվում է առանց դիմակի մուտք գործել և միացնել օդորակիչ,
- \* Բուհերում ուսումնական գործընթացն ընթանում է հեռավար,
- \* խաղատների և տոտալիզատորների աշխատանքն արգելված է (հնարավոր է միայն առցանց),
- \* տաքսու վարորդները պետք է կրեն դիմակ, չի թույլատրվում տաքսիով 2-ից ավելի ուղեւորի տեղափոխումը,
- \* փակ տարածքներում արգելվում է մշակութային և սպորտային միջոցառումների անցկացումը,
- \* արգելվում է 10-ից ավելի մարդկանց հավաքը այնպիսի միջոցառումներին, ինչպիսիք են հարսանիքը, թաղման արարողությունները, տարեդարձը և այլն: Հարկ է նշել, որ Վրաստանի խորհրդարանը օրեր առաջ երկարածեց հունիսին ընդունված օրենքի նախագծի ժամկետը մինչև 2021 թվականի հունվարի 1-ը, ինչը ենթադրում է, որ կառավարությունը առանց երկրում արտակարգ դրություն հայտարարելու կարող է մի շարք սահմանափակումներ սահմանել: